ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԳԲՔԱ-LO-2022/26 ծածկագրով
ընդունված որոշման մասին

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացվել է բողոք:

ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru

Բողոքներ քննող անձին «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 07.03.2022թ.-ին:

07.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/26 համարի ծածկագիրը:

16.03.2022թ.-ին և 01.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 16.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2022թ.-ին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 01.04.2022թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/26 որոշմամբ որոշել է՝

«Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից 07.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/26 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/06» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել Կարգի 28-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ կայացված իրավապարտադիր որոշման կատարման մասին:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**

ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru